26. 222

# ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1930

334.6
Զ-52
1 3 APR 2013
05 JAN 2016

ՁԵԿՅԵՐ ՅԵՎ ԱԼԻԿԱՐԻ

# ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ
1930

12294-57

26.222

Главлит А 59328 Тираж 8000
3-я Типография ГИЗ-а ССР Армении Москва, Армянский пер. 2

Մեր յերկիրը թևակոխել է սոցիալիստական շինարարության բուռն զարգացման շրջանը։ Չեղած արագությամբ է զարգանում կոլխոզային շարժումը, ընդգրկելով ամբողջ ռայոններ և շրջաններ։ Աշխատավոր գյուղացիության միլիոնավոր մասսաները հասկացել են, որ բարեկեցիկ կյանք ձեռք բերելու, մաշող աշխատանքից ազատագրվելու միակ միջոցն է՝ համախմբվել, իրենց ուժերը միացնել, գյուղացիական տնտեսությունը հանրայնացնել՝ գործադրելով մեքենաներ և բարձր տեխնիկա, որ նրանց կտա մեր յերկրի ինդուստրացումը, իսկ այդ ինդուստրացումն մեր յերկրում արդեն սկսվել և առաջ է տարվում՝ բանվոր դասակարգի ջանքերով և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։

Կուսակցության ճշգրիտ քաղաքականությունը՝ մեքենաներ ու արտադրության գործիքներ տվող ծանր արդյունաբերության շինարարության արագ տեմպի վերաբերյալ՝ հաստատուն հիմք ստեղծեց գյուղացիական տնտեսությունը կոլեկտիվացման միջոցով զարգացնելու համար, գյուղատնտեսական արտադրությունը արդեն առաջիկա յերկու տարվա ընթացքում լիովին հանրայնացնելու հնարավորություններ ստեղծելու համար։

Գյուղում սոցիալիստական այդ վերակառուցման նախաձեռնողներն հանդիսացան բանվոր դասակարգը և նրա հավատարիմ դաշնակիցները՝ չքավոր գյուղացիությունն ու բատ-

րակությունը—կուսակցության և խորհրդային իշխանության այդ գլխավոր հենարանը՝ ժողովրդական տնտեսությունը բարձրացնելու գործում։ Շնորհիվ իրենց յեռանդի ու անձնական որինակի, շնորհիվ՝ միջակ գյուղացիության հետ դաշինքը ամրացնելու իրենց ուղիղ քաղաքականության, նրանք կարողացան իրենց յետևից տանել միջակ գյուղացիությունը և այդպիսով ապահովել գյուղի սոցիալիստական փոխակերպության հաջողությունը։

Արտադրական հարաբերությունների արմատական բեկումը, անցումը գյուղացիական մանր ու մանրագույն տնտեսություններից դեպի բարձր-կազմակերպված-կոլեկտիվ տնտեսություն, տեղի յե ունենում դասակարգային սրված պայքարի պայմաններում, պայքար, վորն այնքան ավելի յե սրվում, վորքան ավելի յեն սոցիալիզմի հաջողությունները։

Մասսայական կոլեկտիվացման և կոլեկտիվացած գյուղի բատրակային չքավորական միջուկի ակտիվության բավականաչափ բարձրացման հետևանքով մեր առաջ ծառացավ այս հարցը՝ բնաջինջ անել կապիտալիստական արտադրության արմատները գյուղում, և կուսակցությունը՝ համատարած կոլեկտիվացման յենթարկված ռայոններում, առաջ քաշեց՝ կուլակին, վորպես դասակարգի, լիկվիդացիա անելու հարցը, նրան զրկելու արտադրական ամբողջ բազայից, վոր նրան հնարավորություն ե տալիս շահագործելու ու ճորտացնելու աշխատավորությանը։ Միաժամանակ, Խորհրդային Միության այն ռայոններում, ուր կոլեկտիվացումը դեռևս այնպիսի զարգացած տեմպեր չի ընդունել, ուր դեռևս չկան բավականաչափ տնտեսական նախադրյալներ, ուր չքավոր գյուղացիությունը և բատրակությունը դեռևս բավական չափով միացած ու պատրաստ չեն՝ լիկվիդացիա անելու կուլակին՝ վորպես դասակարգի,—այդ վայրերում ժամանակավորապես իր ուժի մեջ ե մնում՝ կուլակի վրա վճռական հարձակում գործելու, նրա իրավունքները սահմանափակելու և կուլակային ակտիվությունը անխնա ճնշելու լոզունգը, վորը պետք ե փոխարինվի հետևյալ լոզունգով—լիկվիդացիայի յենթարկել կուլակությունը, վորպես դասակարգի, յերբ այդ ռայոնները մասսայորեն և գլխովին կոլեկտիվացման կենթարկվեն։

Հասկանալի յե, վոր կուլակին, վորպես դասակարգի, լիկվիդացիա անելը ել ավելի կկատաղեցնի կապիտալիստական տարրերին, վորոնք ամեն կերպ ձգտում են խոչընդոտ հանդիսանալ սոցիալիզմի հաղթական շարժմանը։ Այդ դրության հետևանքով խիստ անհրաժեշտ ե դառնում ուժեղացնել և ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրայի որգանները—խորհուրդները, վորոնք իրենց շուրջը պիտի համախմբեն չքավոր գյուղացիությունն ու բատրակությունը և, նրանց վրա հենվելով, կյանքում կիրառեն կուսակցության գլխավոր գիծը՝ ամբողջ գյուղական տնտեսությունը արագ կերպով վերակառուցել և գյուղում կապիտալիստական հարաբերություններին ընդմիշտ վերջ տալ։

### Խորհուրդների գլխավոր անելիքները

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն, և ապա ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը իրենց վորոշումների մեջ ընդգծել են խորհուրդների այդ դերը և նիշել, վոր՝ կոլեկտիվացման աճման հետևանքով՝ խորհուրդները լիկվիդացիա անելու կամ դրանց նշանակությունը նվազեցնելու ամեն մի փորձը պետք ե դիտել վորպես հակախորհրդային քայլ, մեր դասակարգային թշնամու սրտից բղխող, դասակարգային թշնամու, վորը ցանկանում ե խախտել պրոլետարական դիկտատուրայի որգանները այն վայրկյանին, յերբ վերջնականապես և վճռականորեն կռիվ ե մղվում կուլակության դեմ և լարված աշխատանք տարվում Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության համար։

Գյուղացիական տնտեսության մասսայական կոլեկտիվացումը կուսակցության և խորհրդային իշխանության առաջ դնում ե հսկայական քաղաքական կարևորություն ունեցող մի շարք խնդիրներ, և այդ խնդիրները պետք ե լուծեն խորհուրդ-

ները, վորպես պետական իշխանության օրգաններ գյուղում, վորպես կուսակցության քաղաքականությունը անցկացնողներ, իրենց սոցիալիստական հայրենիքը կառուցող միլիոնավոր մասսաների աշխատանքային ակտիվությունը և ստեղծարար ինքնագործունեությունը ղեկավարողներ։

*Համախմբել չքավոր գյուղացիությունն ու բատրակությունը, վերադաստիարակել կոլխոզային մասսաները*

Կոլխոզային շարժումն արդեն ընդգրկել է և մոտիկ ապագայում կընդգրկի տասնյակ միլիոնավոր գյուղացիների։ Բայց լոկ այն փաստով, վոր գյուղացին մտել է կոլխոզի մեջ— չի փոխվում գյուղացու (մանավանդ միջակի) իդեոլոգիան, վորպես մանր սեփականատիրոջ իդեոլոգիա։ Հարկավոր է ամենատևական և համառ աշխատանք տանել՝ կոլխոզնիկներին վերադաստիարակելու համար, կենցաղային և տնտեսական հարաբերությունների հին սովորույթները վերացնելու համար։ Կոլխոզի ներսում դեռ երկար ժամանակ կպահպանվեն ստացվածքային և իդեոլոգիական վորոշ տարբերություններ՝ նրա անդամների միջև—բատրակների, չքավորների և միջակների։ Անհնարին չէ և այն, վոր կուլակությունն ազդի կոլխոզնիկներից ավելի անկայուն մասի վրա։ Չէ՞ վոր կան մի շարք դեպքեր, երբ կուլակները և այլ օտար տարրեր մտել են կոլխոզների մեջ և այնտեղ սկսել իրենց քայքայիչ դերը կատարել։ Բնական է, վոր էլ ավելի կատաղի ակտիվություն և դիմադրություն կցուցաբերե կուլակը այսուհետև, քանի վոր նրա մահվան հարցն է դրվում։ Այս ամենը պահանջում է, վոր խորհուրդները աչալուրջ հսկեն, իրենց աշխատանքներում տանեն դասակարգային ուղիղ գիծ և հմտորեն ղեկավարեն կոլխոզների մեջ մտած բատրակ-չքավորներին, վորոնք նոր գյուղի շինարարության հետագա աշխատանքներում հիմնական դեր են կատարելու։



*Հաստատուն դարձնել կոլխոզները, անցնել հանրայնացման բարձրագույն ձևերին*

Կոլխոզների առջև մեծ խնդիրներ են դրված՝ ներքին կազմակերպչական և տընտեսական շինարարության բնագավառում։ Մանր բաժան-բաժան միավորություններն անհրաժեշտ է խոշորացնել և դարձնել կարող արտադրական կոմբինատներ։ Առաջվա ընկերությունները (հողը մշակելու և այլն) անհրաժեշտ է միացնել և դարձնել բարձրագույն ձևերով կազմակերպված հանրայնացված տնտեսություններ—կոլխոզներ և կոմունաներ։ Կոլխոզներում դեռևս չնչին դեր են կատարում հանրայնացված ֆոնդերը։ Նրանց տեսակարար կշիռը՝ կոլխոզների ամբողջ ստացվածքի համեմատությամբ՝ պետք է զգալի չափով ավելացնել։

*Ստեղծել ցուցադրական սոցիալիստական տնտեսություն*

Վոչ պակաս կարևոր նշանակություն ունեն անմիջական արտադրական խնդիրները։ Կոլեկտիվներն ամեն կողմով պետք է լինեն ցուցադրական տնտեսական այնպիսի կազմակերպություններ, ուր մաքսիմալ չափերով է օգտագործվում ինվենտարն ու աշխատանքը, ուր մինիմալ ջանքերով (շնորհիվ լավագույն տեխնիկական պրիոմների, լավագույն մեքենաների, լավագույն հողամշակության, լավագույն պարարտացման և լավագույն սերմերի) պետք է հավաքել ամենաբարձր բերք, պետք է ստանալ ամենամեծ քանակի ապրանքային պրոդուկցիա։

Կոլխոզները պետք է ձգտեն ամեն կերպ ավելացնելու ցանքսի հրապարակը՝ օգտագործելով ագրոտեխնիկայի, ապրանքային և տեխնիկական կուլտուրաների զարգացման բոլոր նվաճումները։ Առանձին ուշադրություն պետք է դարձնել անասնաբուծության զարգացման վրա, լավ ցեղի տավարը բազմացնելու վրա, արդյունաբերական վոչխարաբուծության վրա։ Կոլխոզներում պետք է լավ հիմքերի վրա դրվի գյուղատնտեսական վերամշակության գործը։ Այդ ամենը հնարավորություն կստեղծեն, վոր կոլխոզները դառնան խոշոր գյուղա-

տնտեսական կոմբինատներ և գյուղատնտեսական արդյունաբերությունը բարձրացնեն մինչ յերկրի ինդուստրիալ մակարդակի աստիճանը, և դառնան սոցիալիստական հասարակության կառուցման զորեղ լծակներ։

Կոլեկտիվում աշխատանքային պարտականությունների բաշխումը (կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի նազրուզկան՝ ըստ նրա ընդունակությունների)—կազմում է աշխատանքային պրոցեսների կառուցման հիմքը։ Անհրաժեշտ է վոր յերբեք չօգտագործվի այնպիսի աշխատանք, վորը կարող է խանգարել հավասարությունը կամ առավելություններ ստեղծել կոլեկտիվի այս կամ այն անդամի համար—ով «շատ է մտցրել» գործիքներ կամ այլ ինվենտար,—ուրիշ խոսքով՝ անհրաժեշտ է վերացնել կոլեկտիվի ներսում շահագործման վորևե հնարավորություն։

*Սոցմրցումը ծավալել*

Ինչպես վոր ֆաբրիկներում ու գործարաններում բանվոր դասակարգը իրեն նպատակ դրեց կրճատել ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի կատարման ժամկետը, այնպես էլ ամեն մի կոլխոզնիկ, սոցմրցման հիման վրա, պետք է շտապեցնի և բարելավի հանրայնացված տնտեսության շինարարությունը։ Ինչպես վոր բանվոր դասակարգն է առաջին պլանի վրա դնում ընդհանուր-պետական և ընդհանուր-դասակարգային շահերը, այնպես էլ կոլխոզնիկը առաջին հերթին պետք է կատարի բոլոր պետական առաջադրությունները ու մասնակցի ընդհարուր քաղաքական և պետական կամպանիաներին։ Գյուղխորհուրդները, վորպես պետական իշխանության օրգաններ, պետք է իրենց նպատակ դնեն ու վճռեն ներկոլխոզային շինարարության այս բոլոր խնդիրները, Խորհրդային Միության համապետական շինարարության մեջ կոլեկտիվների մասնակցության խնդիրը։

Պետությունն ամեն կերպ օգնում է կոլխոզային շարժմանը։ Պետությունը նրան հատկացնում է հսկայական գումարներ, նրան տալիս է բավականաչափ վարկեր, կոլեկտիվներին մատակարարում է գյուղատնտեսական ինվենտար, մաքուր տեսակի սերմեր, պարարտացման նյութեր և այլն։ Գյուղխորհուրդները պարտավոր են հետևել, վոր այդ վարկերը և միջոցները օգտագործվեն ինչպես պետք է, և նպաստեն հանրայնացված գյուղատնտեսական արտադրության ամրապնդմանն ու զարգացմանը։

*Սոցիալիստական կենցաղ*

Կոլխոզներում մեծ նշանակություն ունին կենցաղի հարցերը. հին կենցաղի մնացորդները, կրոնական ու կենցաղային նախապաշարումները հաճախ արգելք են հանդիսանում կոլխոզների սոցիալիստական զարգացմանը և զանազան բարդություններ են ստեղծում կոլխոզային միջավայրում։ Մանավանդ կարևոր դեր է կատարում այն, թե արդյոք ուղիղ է լուծվում կոլխոզներում կնոջ աշխատանքի վերաբերյալ հարցը, ինչպես նաև՝ պատանիների աշխատանքի պաշտպանության ու ծերացածների և ինվալիդների սոցիալական ապահովագրության հարցերը։ Գյուղխորհուրդը այդ հարցերում ևս պետք է իր կարող խոսքն ասի։

*Անհատական տնտեսությունների վրա ուշադրություն դարձնելով, դրանց մտցնել կոլխոզների մեջ*

Գյուղխորհուրդները իրենց գլխավոր ուշադրությունը դարձնելով գյուղատնտեսության հանրայնացված սեկտորին (կոլխոզներին և սովխոզներին), միաժամանակ պետք է իրենց վրա վերցնեն պարտականություն և ակտիվ կերպով ղեկավարեն չքավորների ու միջակների անհատական այն տնտեսությունները, վորոնք ինչ-ինչ պատճառներով դեռ չեն մտած կոլխոզների մեջ։

Համատարած կոլեկտիվացման յենթարկված ռայոններում հողային ընկերությունները վերացվում են։ Նրանց ֆունկցիաները՝ արտադրական պրոցեսների ղեկավարության խնդիրներում՝ ամբողջովին անցնում են գյուղխորհուրդներին։

Գյուղխորհուրդները պիտի ձեռք առնեն մի շարք միջոցներ՝ ցանքատարածները լայնացնելու, բերքայնությունը և գյու-

ղատնտեսական պրոդուկցիայի ապրանքայնությունը բարձրացնելու, անասնաբուծությունը զարգացնելու, տեխնիկական կուլտուրաների ցանքսին ուշ դարձնելու և այլն։ Իրենց այդ աշխատանքում՝ գյուղխորհուրդները չպետք է մոռանան հիմնական նպատակը—գյուղացիական տնտեսության սոցիալիստական փոխակերպությունը, և հասարակ միավորությունների կազմակերպման ու լայն կոոպերացման միջոցով՝ անհատական տնտեսությունները հանրայնացնել։

*Քաղաքական գիտակցականության օրինակ ցույց տալ*

Խորհուրդները կազմակերպում են մասսաների ինքնագործնեությունը։ Նրանք հանդիսանում են աշխատավորության հասարակական-աշխատանքային և տնտեսական ակտիվության կենտրոններ։ Ուստի և խորհուրդները պիտի լինեն առաջին կատարողները՝ կուսակցության և խորհրդային իշխանության բոլոր ձեռնարկումների խնդիրներում և խորհուրդների անձնական մասնակցությամբ ցույց տան դիսցիպլինի, կազմակերպվածության և բարձր քաղաքական գիտակցականության օրինակ՝ քաղաքական և տնտեսական կամպանիաները անցկացնելիս, ինչպես և այն խնդրում, թե բնակչությունը ինչպես է կատարում իր պարտականությունները պետության հանդեպ։

Լիկվիդացիայի յենթարկել կուլակությունը, վորպես դասակարգի,—կուսակցության այս ուղեգծի գործնական կիրառումը խորհուրդների առաջ խնդիր է դնում՝ ջախջախիչ հարված տալ կուլակային ակտիվականության ամեն մի արտահայտության, վճռական պայքար մղել կուլակային ազդեցության և իդեոլոգիայի դեմ, վորոնց կրող են հանդիսանում յերբեմն էլ կուլակներին հետևողները, կուլակների պնակալեզները—աշխատավոր գյուղացիության միջից ավելի անկայուն և անգիտակից տարրերը։ Իսկ այս խնդիրը կլուծվի, յերբ վոչնչացվի այն հողը, վորից բուսնում է կուլակը, այսինքն վոչնչացվի կապիտալիստական արտադրությունը և կապիտալիստական հարաբերությունները։ Այստեղից և—կոլեկտիվացման ռայոններում անհրաժեշտ է դառնում՝ վճռականապես հարվածել գյուղի կապիտալիստական տարրերը, նրանց զրկել արտադրական բազայից, տնտեսապես արնաքամ անել կուլակությունը, այդ նպատակի համար օգտագործելով խորհրդի տրամադրության տակ յեղած բոլոր հնարավորությունները՝ քաղաքական, տնտեսական և վարչական բնույթի, ինչպես և այդ պայքարի համար օգնության կանչելով գյուղի բատրակային-չքավորական մասսաները։ Այդ հիմնական կռիվը, խորհրդի օգնությամբ և խորհրդին օգնելով, գյուղում հաստատապես կտիրե բոլոր հրամանատարական բարձրունքներին, շարունակ ամրապնդելով իր դաշինքը միջակ գյուղացիության հետ։

*Անխնա կռվել թեքումների դեմ*

Վոչ պակաս վճռական և անխնա պետք է լինի կռիվը տատանվող տարրերի դեմ, վորոնք վախեցել են բոլշևիկյան հաստատակամ քաղաքականությունից և սոցիալիստական շինարարության արագ տեմպերից,—այն աջ օպորտունիստների (պրակտիկայում) դեմ, վորոնք չեն հավատում կոլխոզների և սովխոզների շինարարությանը, այն հաշտվողականների դեմ, վորոնք հնարավոր են համարում կուլակի «ներաճումը» սոցիալիզմի մեջ և խաղաղ կենակցությունը նրա հետ՝ վերակառուցման շրջանում։ Նրանք ջլատում են մասսաները, քայքայիչ ազդեցություն են գործում նրանց ստեղծարար ինքնագործնեության վրա, նրանք սայթաքում են դասակարգային դիրքերից, ղեկավարությունը հանձնում մանր-բուրժուական և կուլակային տարրերին, ուրիշ խոսքով—կատարում են հակահեղափոխական գործ ու Հոկտեմբերի նվաճումներին դավաճանում։

Նույնպես և անհրաժեշտ է վճռականորեն կռվել այն առանձին տրամադրությունների և «ձախ» թեքումների դեմ (տրոցկիստական իդեոլոգիայի բեկորների դեմ, վոր լսվում են կուսակցության ուղեգծի շուրջը, կուլակության լիկվիդացիայի առթիվ), վոր փորձում են միջակին վոչնչացնել՝ վորպես քաղաքական ֆիգուրա, նրա վրա ևս՝ թեկուզ ժամանակի չափով

տարածել կուլակի դեմ մղվող պայքարի մեթոդները։ Կուսակցությունը չի փոխում իր վերաբերմունքը դեպի միջակ գյուղացին, վորպես իր դաշնակցի։ Ո՛ստի և այդ ձևի փորձերը՝ լինել ավելի «ձախ» (խոսքերով) քան կուսակցությունը,—փաստորեն միևնույն մանր-բուրժուական իդեոլոգիայի արտահայտությունն է, սակայն աստառի կողմով։ Նա կարող է միայն յերկպառակություն քցել այն դաշինքում, վոր կա, մի կողմից՝ չքավորության ու բատրակության և մյուս կողմից՝ միջակ գյուղացիության միջև, նա կարող է դրանով թուլացնել պրոլետարական դիկտատուրայի անհողդողդ հիմքերը, այսինքն—նա ջուր է լցնում կուլակի ջրաղացին։

Այն հողը և արտադրության այն միջոցները, վոր կուլակներից խլում են խորհուրդները, վորպես այդ ստացվածքի անմիջական կարգադրողներ,—հատկացվում են կոլխոզների ուժեղացման և նոր կոլեկտիվ միավորություններ կազմակերպելու գործին։ Դա կուժեղացնի կոլխոզների տնտեսական բազան։ Այդ ձեռնարկումների միայն վճռական և անխնա կիրառումով է, վոր խորհուրդները ապահոված կլինեն, թե չքավոր-բատրակային մասսաները նրանց հարկավոր աջակցություն ցույց կտան, այդ ձեռնարկումների վճռական ու անխնա կիրառումը կհանդիսանա գյուղի սոցիալիստական վերակառուցման վճռական ֆակտոր։

*Աշխատանքի ձևը փոխել՝ համաձայն նոր խնդիրների*

Այդպիսով գյուղխորհրդների խնդիրները և նրանց աշխատանքի ծավալը վերակառուցման շրջանում չափազանց լայնանում է ու բարդանում։ Յեթե վերականգման շրջանում խորհուրդները մեծ մասամբ զբաղվում եյին մանր-գյուղացիական անհատական տնտեսությունների վերականգման գործով, ապա այժմ նրանք պետք է ամբողջովին զբաղվեն սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության կազմակերպման գործով, վոր կապված է գյուղի ամբողջ կենցաղի անխուսափելի բեկման հետ։ Շատ գյուղեր



այդ գործի համար այժմ պատրաստ չեն։ Նրանք չունեն վոչ հարկավոր միջոցներ, վոչ էլ վորակյալ աշխատավորների ու ղեկավարների կադրեր, և վոչ էլ փորձ։ Կան այնպիսի խորհուրդներ, վորոնք դեռևս մասամբ գտնվում են կուլակային ազդեցության տակ, և անկարող կլինեն վճռական ու վերջնական հարված տալ կուլակությանը, նրան՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիայի յենթարկելով։ Խորհուրդների աշխատանքի ձևերը, վոր նիշված եյին վերակառուցման շրջանի համար,—արդեն հնացել են և չեն համապատասխանում աշխատավոր մասսաների՝ մինչ այժմ չեղած տեմպով ծավալվող ակտիվության։ Աշխատավորության նյութական դրության բարելավումը և այն, վոր այժմ մասսաները կուլտուրապես-քաղաքականապես զգալի չափով զարգացել են,—այդ ամենի հետևանքով մասսաները խորհուրդներին ավելի ու ավելի մեծ պահանջներ են առաջադրում։ Բայց դրանից, իհարկե, յերբեք չի հետևում, վոր խորհուրդները, վորպես սիստեմ, պիտի վերացնել։ Ինչպես վերև ասացինք, նրանք հանդիսանում են պրոլետարիատի դիկտատուրայի և պետական իշխանության կազմակերպման լավագույն ձևը։ Նրանք հնարավորություն են տալիս՝ աշխատավորներին լավագույն կերպով մասնակից անելու պետությունը կառավարելու և սոցիալիստական շինարարության գործին։ Փոխված պայմանները միայն պահանջում են՝ փոխել խորհուրդների աշխատանքի ձևերն ու մեթոդները՝ համաձայն աշխատանքի նոր պայմանների, համաձայն այն բանի, վոր առաջադրած խնդիրները լայնանում են։

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը իր վորոշման մեջ պարզ ցույց է տալիս, վոր անհրաժեշտ է խորհուրդների աշխատանքում արագ ու արմատական բեկում կատարել.—«Այն գյուղխորհուրդը, վորն իր աշխատանքը չի կառուցի այնպես, վոր համապատասխան լինի մասսայական կոլեկտիվացմանը, յետ չի կանգնի կոլխոզային շարժման գլուխ,—այդպիսի գյուղխորհուրդը իսկապես կլինի կուլակային խորհուրդ, վոր անկարող է կիրառել սոցիալիս-

տական շինարարության քաղաքականությունը»։ Բայց դրա հետ միասին, Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունն ընդգծում է՝ վոր ամբողջ գյուղական հասարակությունը, տնտեսական կազմակերպությունները և արտադրական միավորությունները՝ սոցիալիստական բնույթի, վորպիսիք իրենցից ներկայացնում են կոլխոզները, պետք է հաստատապես գիտնան և գիտակցեն գյուղական խորհրդի դերը, վորպես իրենց տերիտորայի տիրոջ և նոր գյուղի կառուցողի։ «Նմանապես յեվ այն կոլխոզը,—ասված է այդ վորոշման մեջ,—վորը հակառակ է գնում գյուղխորհրդին, ձգտում է նրան վերացնել կամ իր աշխատանքում զանց է առնում գյուղխորհրդին,—այդպիսի կոլխոզը ջուր է լցնում կուլակի ջրաղացին յեվ չի կարող լինել գյուղական տնտեսության վերակառուցման սոցիալիստական ձևը»։

*Անգործունյա գյուղխորհուրդներին պետք է վերընտրել*

Անցնելով գործնական ձեռնարկումների քննության, այնպիսի ձեռնարկումների, վորոնք կապահովեն խորհուրդների աշխատանքը արագ վերակառուցելու, անհրաժեշտ է ամենից առաջ յելակետ ունենալ ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի այն վորոշումը, ըստ վորի՝ պետք է անմիջապես վերընտրվեն բոլոր այն խորհուրդները, վորոնք յետ են մնում գյուղի սոցիալիստական փոխակերպման տեմպերից, վորոնք անկարող են կազմակերպել մասսաները, վորոնք չեն կանգնել կոլխոզային շարժման գլուխ։ Միաժամանակ կվերընտրվեն բոլոր գյուղխորհուրդները համատարած կոլեկտիվացման ռայոններում, ուր առանձնապես սուր է դրված նման խորհուրդներին անմիջապես լուծարքի յենթարկելու և գործունյա խորհուրդներ ընտրելու հարցը։ Այդ դիրեկտիվի ճշգրիտ կիրառումը վճռողական նշանակություն կունենա։ Վերընտրությունները պետք է նորոգեն ու թարմացնեն գյուղխորհուրդների կազմը, նրանցում առաջին հերթին ամրացնելով և ավելացնելով բատրակային-չքավորական կորիզը։ Գյուղխորհուրդի կազմի մեջ պետք է



մտնեն կոլխոզային շարժման ակտիվ շինարարները և աշխատողները, գյուղի սոցիալիստական վերակառուցման առաջավոր մարտիկները։ Խորհուրդների կազմից պետք է դուրս քշել անաշխատունակներին, ընտրողների վստահությունը չարդարացրած անձանց, կուլակներին հետևողներին, ամեն տեսակ ստահոդ միջոցներով խորհուրդ մտած կուլակներին և ուրիշ հակախորհրդային տարրերին։

Հաշվետվական-ստուգողական կամպանիան, վոր պիտի տարվի խորհուրդների վերընտրությունից առաջ, պետք է օգտագործվի՝ ինքնաքննադատության լայն ծավալման հիման վրա մանրազննին կերպով ստուգելու խորհուրդների ամբողջ գործնեյությունը, թե նրանք ինչ չափով են կատարել քաղաքական և տնտեսական գլխավոր խնդիրները, ինչ չափով են գյուղական տնտեսությունը հանրայնացրել, մասսաների կուլտուրական-լուսավորական և սոցիալական-կենցաղային գործով զբաղվել և պետական կամպանիաները կատարել։

*Վերընտրությունները օգտագործել հօգուտ գյուղի սոցիալիստական վերակառուցման։*

Խորհուրդների վերընտրությունները՝ վորպես մասսայական քաղաքական կամպանիա, անհրաժեշտ է լիովին օգտագործել՝ աշխատավորության ուշադրությունը դարձնելու ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական հարցերի վրա, սոցիալիստական մրցումը լայն ծավալելու վրա. սոցմրցումը պիտի ծավալել՝ խորհուրդների, կոլխոզների, սովխոզների առաջ դրված արտադրական խնդիրները լավագույն կերպով կատարելու համար։

Խորհուրդների վերընտրությունները անհրաժեշտ է օգտագործել՝ քաղաքի կապը գյուղի հետ ամրացնելու համար, այն իմաստով, վոր քաղաքը՝ բանվոր դասակարգը և նրա դասակարգային օրգանները՝ քաղաքային խորհուրդները արտադրական օգնություն են ցույց տալիս կոլեկտիվացված գյուղին՝ գյուղխորհուրդներին—պրոլետարական դիկտատուրայի օրգաններին՝ գյուղում։

Վերընտրական կամպանիան պետք է նույնպես միաձուլի բատրակության ու չքավոր գյուղացիության, պետք է բարձրացնի նրանց մարտունակությունը և նրանց ուշադրությունն ու ուժերը դարձնի այն բանի վրա, որ պետք է գործնականորեն կյանքում կիրառել տրված լոզունգը՝ հետագայում ևս շարունակել վճռականապես հարձակում գործել ու սահմանափակել կապիտալիստական տարրերը, իսկ համատարած կոլեկտիվացման յենթարկված ռայոններում՝ կուլակներին, որպես դասակարգի, լիկվիդացիա անել։ Վերընտրական կամպանիայի միջոցին անհրաժեշտ է աշխատավորությանը բացատրել խորհուրդների աշխատանքի մեջ կատարվող պատմական բեկման եյությունը, բեկումն, որ նշանավորվում է դառնում այս լոզունգով—«Գյուղխորհուրդներ! յերեսներդ դարձրեք դեպի կոլեկտիվացում»։ Խորհուրդների աշխատանքում կատարվող այդ բեկումը գյուղում խորհրդային շինարարության նոր շրջան է բաց անում։

Վերջապես, խորհուրդների վերընտրությունների ժամանակ, մանավանդ հաշվետվական-ստուգողական կամպանիայի միջոցին, անհրաժեշտ է աշխատավորության լայն մասսաներին բացատրել, թե ինչ է պատճառը, որ այս կամ այն խորհուրդը վերընտրվում է, թե ինչու պետք է յետ կանչվի խորհրդի այս կամ այն անդամը, թե ինչպիսի աշխատանք են տարել խորհուրդները գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման գործում, ծում շահերն են պաշտպանել նրանք։

*Ուշի ուշով պատրաստվել վերընտրություններին*

Վերընտրական կամպանիան ծավալվելու յե և ավարտվելու յե մինչև գարնանացանի սկսելը, որպեսզի խորհուրդները նորոգված կազմով՝ ամրապնդված ղեկավարությամբ՝ ի վիճակի լինին ծավալելու ցանքսի կամպանիան։ Ուստի հաշվետու-ստուգողական կամպանիայի առաջ տարումը և խորհուրդների վերընտրության նախապատրաստությունը խիստ վորոշակի ու արագ պետք է կատարվի ճիշտ մշակած որացուցային պլանի համաձայն։ Նախապատրաստության հիմնական հարցն է՝ համախմբել նախընտրական կամպանիայի խնդիրների շուրջը բատրակ և չքավոր-միջակ ակտիվը՝ ապահովելով չքավորության ղեկավարող դերը։ Բատրակության, չքավորության և կոլխոզնիկների այս խմբակներում և ընդհանուր ժողովներում հարկավոր է մանրամասնորեն մշակել կամպանիայի պլանը և խորհուրդների ակտիվի ու հասարակական կազմակերպությունների՝ կամպանիային նախապատրաստելու և մասնակցելու ձևերը։

*Հենվել չքավորության յեվ բատրակների վրա, մեջ քաշել միջակին, ջախջախիչ հարված տալ կուլակին*

Գյուղխորհուրդների և ռայգործկոմների նախաժամկետային վերընտրությունները, նաև համատարած կոլեկտիվացման շրջաններում գյուղխորհուրդների վերընտրությունները համաձայն ԽՍՀՄ կենտգործկոմի վորոշման՝ պետք է կատարվեն ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների ընտրական օրենսդրության համաձայն։

Վերընտրություններն անցկացնելու համար կազմվում են ընտրողական հանձնաժողովներ, վորոնց կազմի մեջ անհրաժեշտ է ապահովել չքավոր-միջակային ուժեղ միջուկը։ Այդ հանձնաժողովներն իրենց աշխատանքին մասնակից են անում տեղական հասարակայնությունը և չքավորության խմբերը։

Ընթացիկ կամպանիային կարևոր նշանակություն է ունենալու ընտրողների և ձայնազուրկների ցուցակները կազմելու հարցը։ Ամենալայն չափով ապահովելով ընտրություններին բոլոր աշխատավորների հնարավոր մասնակցությունը, անհրաժեշտ է միաժամանակ ամենակտրուկ կերպով թույլ չտալ, որ հաշվետու և ընտրական ժողովներին ներկա լինեն կուլակները և այլ հակախորհրդային տարրերը։

*Պետք է մանրամասն բացատրել*

Ագիտացիոն պարզաբանող աշխատանքին ամենից առաջ պետք է լծել մամուլի աշխատակիցներին և օրգաններին։ Բազմակողմանիորեն լուսաբանել կամպանիան՝ պատի թերթերում, զեկուցումներ տալ, հարցերի-ընթերցարաններ





12294-57

րում, դպրոցում, չքավորական խմբերում, կոլխոզնիկների ժողովներում, կոոպերացիայի անդամների, փոխօգկոմների ընդհանուր ժողովներում և այլն։ Ինքնաքննադատությունը լայնորեն ծավալելուն մասնակից պետք է դարձնել ամբողջ պատի թերթերի թղթակիցների ցանցը։ Ագիտացիոն նույն նպատակներով մեծապես պետք է օգտագործել կինոները, շարժական կինոները, թատրոնական խմբերը, ռադիոն, մարզական արշավները, յերիտ-կարնավալները, և այլն։

Հաշվետու—ստուգողական կամպանիան հաջողությամբ անցկացնելու նպատակով անհրաժեշտ է ուշի ուշով քննել առանձնակի կազմակերպչական մանրամասերը՝ ընտրողներին ժամանակին ծանուցելը, շենքերի նախապատրաստումը, զեկուցողների ընտրությունը, նրանց՝ հանրամատչելի—պոպուլյար նյութերի մատակարարումը և այլն։ Բացի այդ ուշադրություն պիտի դարձնել, թե արդյոք խորհուրդները ինչ չափով են իրագործել իրենց տրված նախկին հրահանգները (նակազները), ընտրողների արած բոլոր նկատողություններն ու հայտնած ցանկությունները հաշվի և նկատի յե՞ն առնված յեղել թե վոչ։ Խորհուրդներին տրվող նոր ցուցմունքներն ու հրահանգները իրենց հիմնականում կառուցված պետք է լինեն ժողովրդական տնտեսության զարգացման վերաբերմամբ կուսակցության գլխավոր գծի համաձայն, ունենան սոցիալիստական հեռանկար և կատարելապես պիտի արտացոլեն տեղական շինարարության շահերը՝ մասսաների տնտեսական և կուլտուր-կենցաղային սպասարկման բնագավառում։ Հրահանգների մեջ ճշտորեն մասնանշված պետք է լինեն խորհրդին արած այն առաջադրումները և հանձնարարությունները, վորոնք վերաբերում են գյուղական տնտեսության կոլեկտիվացմանը և կոլխոզային շինարարությանը։

Խորհուրդների վերընտրությունների հիմնական նպատակն է՝ ջոկել մի այնպիսի կազմ, վորը մաքսիմալ չափով ապահովի պրոլետարիատի դիկտատուրայի շահերը, դասակարգային ճիշտ գծի կիրառումը և գյուղի սոցիալիստական վերափոխության



հաջողակ ղեկավարությունը։ Ուստի վճռական նշանակություն է ունենալու խորհրդի թեկնածուների ճիշտ ընտրումը և առաջադրումը, վորպիսին տեղական հասարակական կազմակերպությունները պետք է իր ժամանակին անցկացնեն՝ կուսակցության ղեկավարության ներքո։

*Սոցիալիզմը հաստատակամ կառուցողներին պետք է քաշել խորհուրդների մեջ*

Ո՞ւմ քաշել խորհուրդների մեջ։ Խորհուրդի հիմնական կորիզը պետք է կազմված լինի բանվոր դասակարգի հաստատուն դաշնակիցներից՝ բատրակներից և չքավորներից։ Գյուղխորհուրդն է մտնելու կոլխոզնիկների ակտիվը, հասարակական աշխատանքում կոփված ու ստուգված միջակները, զորացրված կարմիր բանակայինները, կարմիր նավատորմայինները, նախկին կարմիր պարտիզաններն ու կարմիր գվարդեյականները, վորոնք զենքը ձեռքին պաշտպանել են Հոկտեմբերի նվաճումները, և գյուղական ինտելիգենցիայի այն մասը, վորը նվիրված է սոցիալիստական կառուցման շահերին։ Խորհուրդների կազմում մտնելու յեն կին կոլխոզնիկները և կանանց ակտիվը։ Խորհուրդների այսպիսի կազմն է, վոր ապահովելու յե նոր գյուղի շինարարության հետագա հաջողությունները։

Խորհրդի անդամների թեկնածությունները պետք է դրված լինեն չքավոր և բատրակ խմբերի քննությանը, անցկացվեն կոլխոզնիկների և գյուղական ակտիվի ընդհանուր ժողովների միջով։ Թեկնածության քննությանը և քվեարկման միջոցին անհրաժեշտ է ապահովել խորհրդային դեմոկրատիայի պահպանումը, վոչ մի դեպքում չհրաժարվելով խորհուրդների վերընտրության ամբողջ պրոցեսի հաստատ ղեկավարությունից։ Կուլակային և այլ հակախորհրդային տարրերի բոլոր փորձերը՝ ընտրողների շարքերում ճեղքվածք առաջացնել, վիժեցնել ժողովները, պառակտել մասսաները, առանձին աշխատավորներին վարկաբեկել կամ վախեցնել՝ այդ բոլոր փորձերը անխնայորեն պետք է ջախջախվեն կամ կասեցվեն։

Ընտրական կամպանիայի հաջող գործադրության համար պահանջվում է բոլոր հասարակական կազմակերպությունների լարված ուշադրությունը և մասնակցությունը, հատկապես կարևոր է կուսկազմակերպությունների, վորպես ամբողջ հասարակական կյանքի քաղաքական ղեկավարների դերը, նաև պրոֆմիություններինը, վոր անմիջական և սերտորեն կապված են կազմակերպված պրոլետարների միլիոնավոր մասսաների հետ։

*Ստեղծել խորհուրդների ղեկավարներիյեվ խորհրդային ակտիվի կադրեր*

Սակայն խորհուրդների վերընտրություններով դեռևս չի լուծվում խորհրդային ապարատի և խորհուրդների ղեկավարների կադրերի հարցը։ Հիմնականում նա պետք է լուծվի այդ կադրերի ստեղծմամբ՝ տեղերում՝ խորհրդային ակտիվ նախապատրաստելու և առաջ քաշելու միջոցով, ապահովելով նրանց աշխատանքը խորհուրդների և գյուղական կազմակերպությունների ղեկավար պաշտոններում։ Ակտիվիստներին սկզբում պետք է ծանոթացնել և վարժեցնել խորհրդային աշխատանքներին՝ սեկցիաների մեջ քաշելով նրանց, հանձնարարելով նրանց այս կամ այն անելիքը, ստուգելով դրանց իրագործումը։ Ակտիվի հիմնական կորիզը պետք է մասնակցություն ունենա իրենց շրջաններում հրավիրվող խորհրդակցություններին և կոնֆերենցիաներին, վորոնք նվիրված են լինում պետական և տեղական շինարարության առանձին հարցերին, և զանազան քաղաքական ու տնտեսական կամպանիաների անցկացման միջոցին ակտիվն է լինելու նախահարձակը և առաջին շարքերում։

Ահա այս ակտիվից է վոր առաջ են քաշվում գյուղխորհուրդների նախագահներ, խորհուրդների սեկցիաների և գյուղդատարանների նախագահները և այլն։ Առաջ քաշվածների թեկնածությունները նախորոք քննվում են չքավորական, բատրակային խմբակներում և անց են կացվում ակտիվի ընդհանուր ժողովների միջով։



*Խորհուրդների աշխատակիցների վորակը պետք է բարձրացնել*

Յերկրի սոցիալիստական շինարարության խնդիրները հետզհետե լայնանում են, մասսաների քաղաքական մակարդակը մեծանում է, խորհուրդների աշխատանքի պայմանները բարդանում են, ուստի անհրաժեշտ է, վոր գյուղական աշխատավորները շարունակ բարձրացնեն իրենց վորակավորումը պարբերական դասընթացների միջոցով։ Կենտրոնական գործկոմներին կից հիմնված այդ դասընթացների նպատակն է նախապատրաստել և վերապատրաստել խորհրդային աշխատավորներ և տարվա մեջ բաց թողնել, կեսից վոչ պակաս, գյուղխորհուրդների նախագահներ և քարտուղարներ։ Անհրաժեշտ է նաև գումարել ակտիվ աշխատողների համագումարներ, տարին վոչ պակաս չորս անգամ։ Անհրաժեշտ է խորհուրդներին մատակարարել հանրամատչելի գրականություն՝ խորհրդային շինարարության վերաբերյալ գրքեր, գյուղատնտեսական՝ անասնաբուծությանը, բամբակագործությանը և այլ մասնաճյուղերի վերաբերյալ գրքեր։

*Քաղխորհուրդների աշխատակիցների ստուգված կադրերը գյուղ ուղարկել*

Քաղխորհուրդները պետք է ոգնություն ցույց տան գյուղին։ Քաղաքային խորհուրդների շեֆությունը գյուղական խորհուրդների վրա՝ առաջին հերթին պետք է արտահայտվի նրանով, վոր քաղաքից գյուղ են ուղարկվում քաղաքային խորհրդի ակտիվ անդամների թվից՝ գյուղում մշտական աշխատանք տանելու համար քաղաքականապես կոփվածները։ Միաժամանակ անհրաժեշտ է քննել և ուշադրության առնել նաև գյուղում տևական ժամանակավոր աշխատանքները (գյուղխորհուրդներում) տանելու համար քաղխորհուրդների անդամներին ուղարկելու հարցը և բացի այդ անհրաժեշտ է մտածել նաև ոգնության այլ ձևերի մասին, վորոնք կիրառվելու յեն այդ խնդրի շուրջ՝ հասարակական կարծիքի գրավման և լայն մրցակցության հիմունքներով։

**Շրջանային յեվ ռայոնական ակտիվը՝ ուղարկել գյուղ**

Ավելի վճռականորեն պետք է գյուղ ուղարկել շրջանային և ռայոնական մասշտաբի ղեկավար ակտիվին, վորն անմիջականորեն ծանոթ է գյուղի պայմանների և կենցաղի հետ։

Կադրերի հարցը սերտորեն կապված է խորհուրդների աշխատավորների նյութական դրության անհրաժեշտ բարելավման հետ, սակայն և այնպես հիմնական յելակետը պետք է լինի՝ զարգացնել մասսաների ինքնագործնեությունը, խորհուրդների աշխատանքին մասնակից անել տասնյակ միլիոնավոր աշխատավորներ և առաջին հերթին՝ գյուղական չքավորությանն ու բատրակներին։

**Չքավոր գյուղացիությունը յեվ բատրակներին կազմակերպել ու համախմբել**

Խորհուրդների, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի մարմինների վրա՝ առանձին պատասխանատվություն է դրվում՝ ակտիվ աշխատանքի մղելու բատրակ-չքավորական մասսաները, համախմբելու նրանց վորպես առաջավոր մարտական ջոկատի՝ կուլակային-շահագործական դասակարգը վոչնչացնելու ֆրոնտում։

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի վորոշումը «Չքավորության կազմակերպության մասին» մատնանշում է, վոր խորհուրդները և շրջգործկոմները, այլ և կոլխոզների վարչությունները, կոոպերատիվի և փոկերի վարչությունները (և առաջին հերթին նրանց կոմֆրակցիաները) պետք է վճռական առաջադիմություն ցույց տան՝ չքավորության մեջ ուժեղ աշխատանք տանելու գործում։

Պետք է ասել, վոր այս ասպարեզում բանն այնքան էլ հաջող չէ։ Նույնիսկ այն շրջաններում, վորտեղ լայնորեն ծավալվել է մասսաների ակտիվությունը և ինքնագործնեությունը, վորտեղ մեծ հաջողություններ են ձեռք բերված գյուղի կոլեկտիվացման գործում, վորտեղ կուլակությանը ճնշելու, վորպես դասակարգի լիկվիդացիայի յենթարկելու հարցը դրված է ընդհուպ,



նույնիսկ այդ տեղերում չքավորության և բատրակության մեջ աշխատանքը վատ է տարված։

Օրինակ՝ կան շրջաններ, վորտեղ չքավորության խմբակներն աշխատելիս են յեղել առանց պլանի, իսպառ չեն աշխատել նրանք սպառողական ընկերություններում, գյուղխորհրդի՝ չքավորության սպասարկման աշխատանքում դասակարգային գիծը կիրառված չի յեղել։ Մի այլ տեղ, թեև չքավորական խմբակները կազմակերպչորեն ձևակերպված են յեղել, բայց աշխատանքը կրկին անսիստեմ է տարվել։ Դրա շնորհիվ չքավորությունն ընկած է յեղել կուլակների ազդեցության տակ։ Մի ուրիշ տեղ՝ իսպառ մոռացել են չքավորության մասին։

Առանձին խորհուրդները, վորոնք աղբոտված եյին կուլակներով և նրանց հետևողներով, չքավորության շահերին աշկարա թշնամական գիծ եյին անցկացնում, ամեն կերպ վիժեցնելով չքավորության կազմակերպությունների ու նրան ոգնելու գործը։

**Ստեղծել չքավորության խմբակներ, նրանց հետ միասին ուժեղ աշխատանք տանել**

Կոնկրետ կերպով՝ ռայգործկոմները և գյուղական խորհուրդները, կուսակցական, կոմյերիտական կազմակերպությունների, Հողանտառ. պրոֆմիության, կոոպերատիվ որգանների և գյուղական կոմիտեների հետ միասին պետք է անհապաղ ստուգեն գյուղի բոլոր ընտրովի կազմակերպություններին կից գոյություն ունեցող չքավորության և բատրակային խմբակները, և կազմակերպեն նրանց այնտեղ, ուր այդպիսիները չկան։ Առանձին ուշադրություն պետք է դարձնել չքավորության և բատրակների խմբակներին կոլեկտիվ պարզ միավորություններում, վորտեղ չքավորությունը պետք է հանդիսանա այն կորիզը, վորն իր յետևից է տանում միջակին և կուսակցության ու խորհուրդների բոլոր միջոցառումներն է անցկացնում՝ կոլխոզների կազմակերպչական-քաղաքական և տնտեսական ամրացման գործում։ Ռայգործկոմներն

ու գյուղխորհուրդները՝ աշխատանքի առանձին ճյուղերի վերաբերյալ չքավոր-բատրակային խորհրդակցություններ հրավիրելու, չքավորների և բատրակների խմբակների ակտիվի և ղեկավարների համար՝ դասընթացքներ ու համագումարներ անցկացնելու, նրանց միջից խորհուրդների և նրանց սեկցիաների, կոլխոզների, կոոպերացիայի և գյուղկոմիտեների վարչությունների մեջ աշխատողներ առաջ քաշելու նախաձեռնությունը պետք է ցուցահանեն։

*Ամրացնել դաշինքը միջակ գյուղացիության հետ*

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել չքավորության՝ միջակ գյուղացիության հետ ունեցած դաշինքի հետագա ամրացման վրա։ Չքավորության և բատրակների ղեկավար դերը պետք է յերևա կուլակության՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիայի մեջ, պիտի հսկեն, վոր կուլակները ինվենտարն ու անասունները չվնասեն, չվոչնչացնեն, պիտի հսկեն, վոր գյուղի կապիտալիստական տարրերը արմատախիլ արվեն և առհասարակ գործ դրվեն բոլոր այն միջոցառումները վորոնք նախատեսված են այդ բնագավառում ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի համապատասխան վորոշումով։

Միաժամանակ, պետք է արմատապես բարեփոխել քաղաքական-լուսավորական աշխատանքը չքավորության և բատրակների մեջ, բատրակ-չքավորական ակտիվին ներգրավելով խրճիթ-ընթերցարանների և ակումբների աշխատանքներին անմիջականորեն մասնակցելու, ուժեղացնելով դպրոցների, ինքնակրթության խմբակների գործունեությունը և առաջին հերթին՝ վերացնելով բատրակների և չքավորության անգրագիտությունը։

Անհրաժեշտ է լուրջ կերպով զբաղվել չքավորների ոգնության և բատրակների շահերի պաշտպանության խնդիրներով։ Կոլեկտիվ միավորությունների վերաբերմամբ նույնպես խորհուրդները պետք է իրենց վրա առնեն աշխատանքի կազմակերպման և կենցաղային խնդիրների լուծման ընդհանուր ղեկավարությունն ու ստուգումը՝ չքավորության, բատրակների



և կանանց շահերի պաշտպանության խիստ դասակարգային գիծ անցկացնելով այստեղ։

Այս բոլոր միջոցառումները և դրանց կատարումը ուղղակի բղխում է կուսակցության Կենտկոմի՝ չքավորությունը կազմակերպելու մասին դիրեկտիվներից, և միայն այդ դեպքում կարելի կլինի հաջողությամբ իրագործել յերկրի առաջ կանգնած գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրը, ինչպես նաև կուլակության՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիայի խնդիրը։

*Ծավալել մասսայական աշխատանքը*

Գյուղխորհրդի ամբողջ աշխատանքը պետք է մասսայական բազայի վրա կառուցվի։ Գյուղխորհրդի մասսայական աշխատանքի հիմնական հունը պետք է նրա սեկցիաները լինեն։ Մինչև այժմ սեկցիաների աշխատանքը մեծ մասամբ կաղում էր։ Նրանում կոնկրետ բովանդակություն չկար, նա պատահական բնույթ էր կրում։ Սեկցիաների աշխատանքն աշխուժացնելու համար այժմ պետք չէ փնտռել կազմակերպչական նոր ձևեր։ Դրանք հետագայում, սեկցիաների աշխատանքի ծավալման պրոցեսում, իրենք կհայտնվեն։ Խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի նրանք դառնան տեղական շինարարության բոլոր խնդիրների նախնական մասսայական մշակման, ընդհանուր պետական խնդիրների տեղական պայմաններին համապատասխան քննության որգաններ, վորոնք հայտնաբերում են աշխատավորների ինքնագործունեությունն ու ձեռներեցությունը և ոգտագործում են նրանց տնտեսական փորձը։

*Վերակառուցել սեկցիաների աշխատանքը*

Խորհուրդների ընդհանուր վերակառուցման համապատասխան (ուշադրութ. կոլեկտիվացմանը), ակներև է, վոր սեկցիաների աշխատանքն էլ կվերակառուցվի կոլխոզային շինարարության առանձին ճյուղերին վերաբերող խնդիրների լուծման և գյուղի կուլտուրայի և կենցաղի սոցիալիստական վերակազմության ուղղությամբ։ Այսպես՝ որի-

նակի համար խորհուրդներին կից պետք է կազմակերպվեն՝ ա) գյուղատնտեսական սեկցիա, որը պետք է աշխատի արտադրական խորհրդակցության պես, բ) ֆինանսական, որը պետք է վարի բյուջեյի շինարարությունը և հարկային գործը, գ) կոմունալ, որը պետք է պարապի կոմունալ ու ճանապարհների շինարարության և բարեշինության ու սանիտարիայի հարցերով, դ) կուլտուր-կրթական՝ դպրոցական և քաղլուսավորական գործերի համար, և ե) սոցիալ-կենցաղային՝ աշխատանքային և կենցաղային խնդիրների համար: Վարչական կարգի գործերը պետք է ինքը խորհուրդը վարի, հենվելով լիազորների ինստիտուտի և հասարակական ձեռներեցության վրա (պայքար խուլիգանության, արբեցողության դեմ և այլն):

Խորհուրդը պետք է հանդիսանա որպես գյուղի բոլոր տնտեսական պրոցեսների ղեկավար, որն անմիջապես վարում է հողային ֆոնդերը, ունի իր բյուջեն, իրականացնում է շինարարությունը և մասսաների կուլտուր-կենցաղային սպասարկումը՝ զգալիորեն ավելացնելով խորհրդի սեկցիայի տեսակարար կշիռը. աշխատանքի ավելորդ կրկնություն և ուժերի վատնում թույլ չտալու համար, անհրաժեշտ է լիկվիդացիայի ենթարկել կոլխոզներին և ուրիշ տնտեսական կազմակերպություններին կից նման սեկցիաները:

Խորհրդի սեկցիաներում, որպես կանոն, պարտադիր կերպով մշակվում են՝ համապատասխան բաժիններով՝ խորհրդի բյուջեն, խորհրդի աշխատանքի պլանը, կոլխոզների արտադրական և տնտեսական պլանները, շինարարական նախահաշիվներ, ցանքսի կամպանիայի պլանը և այլն:

Սեկցիաների աշխատանքներին մասնակից են արվում գյուղի բոլոր կուլտուրական ուժերը, կոլխոզների և հասարակական կազմակերպությունների ակտիվը: Սեկցիաներն աշխատում են խորհրդի պլենումի հաստատած պլաններով և իրենց աշխատանքի մասին պարբերաբար հաշիվ են տալիս նրան:



*Ծավալել մասսայական ինքնագործունեության նոր ձևերը*

Բայց սեկցիաների աշխատանքով խորհրդի մասսայական ինքնագործունեությունը չի վերջանում: Խորհուրդը պետք է զանազան միջոցառումների և կամպանիաների անցկացնելուն օգնող օժանդակիչ խմբակներ և հարվածային խմբակներ կազմակերպի: Ընտրովի վերաստուգիչ հանձնաժողովներին օգնելու համար կազմակերպվում են քննիչ բրիգադներ: Խորհրդի կազմի մեջ մտնող առանձին գյուղերում և կոլխոզներում կազմվում են պատգամավորական խմբակներ, որոնց շուրջը համախմբվում է բատրակ չքավորական և միջակների ակտիվը:

Խորհրդի ամեն մի անդամ, հանդիսանալով գյուղի վերակառուցման ակտիվ և առաջավոր մարտիկ, պետք է աշխատավորների միջև բացատրական աշխատանք տանի, նպաստելով մասսաների հասարակական և տնտեսական ինքնագործունեության զարգացմանը: Խորհրդի ղեկավարությամբ պետք է մասսայական սոցիալիստական մրցակցություն ծավալվի՝ գյուղական տնտեսության արագ հանրայնացման և կուլտուրայի ու կենցաղի արմատական վերափոխման ասպարեզում:

*Ամրացնել խորհուրդների նյութական բազան*

Նյութական միջոցների բացակայության դեպքում՝ գյուղխորհուրդների քիչ թե շատ լուրջ ծավալուն գործունեության մասին խոսել՝ չի կարելի, և ահա ինչու խորհուրդների հանրապետական և միութենական համագումարները, 1925 թվից սկսած, հետևողականորեն, իրենց վորոշումների մեջ ընդգծում էին գյուղական շինարարության ուժեղացման անհրաժեշտությունը: Դեռ 1927/1928 բյուջետային տարում ՌՍՖԽՀ սահմաններում 3.411 ինքնուրույն բյուջեյով գյուղական խորհուրդներ կային—բոլոր գյուղխորհուրդների թվի 6%: Ուկրաինայի ՍԽՀ սահմաններում տոկոսը մի փոքր ավելի յեր—6,4%: Արդեն 1928 թվին ՌՍՖԽՀ մեջ գյուղական բյուջեյով ընդգրկված էր գյուղխորհուրդների

14%-ը, իսկ Ուկրայինայում՝ 32,1%, այսինքն՝ բյուջեն հինգ անգամ աճել էր։

Բայց այդ դրական յերևույթին զուգընթաց՝ պետք է ընդգծել և բյուջեների չափազանց թույլ վորակային աճումը, վորն ուղղակի ցույց է տալիս, վոր ռայգործկոմները գյուղխորհուրդների շինարարությանը արժանի ուշադրությունը չեյին դարձրել, մասնավորապես չեյին հայտնաբերել յեկամուտի նոր աղբյուրներ, վորոնք կարելի յեր հանձնել գյուղխորհուրդներին, և դանդաղեցրել եյին գյուղական բյուջեների աճումը։ Վերջապես, իրենց՝ գյուղխորհուրդների յեկամուտի աղբյուրներ գտնելու անփորձությունը և աննորմալությունները տնտեսական ձեռնարկների բաշխման և դրանց շահագործման բնագավառում տարբեր գյուղական կազմակերպությունների, մանավանդ՝ գյուղխորհուրդների, հողային ընկերակցությունների, գյուղացիության փոխադարձ օգնության կոմիտեների և այլն մեջ, նույնպես գյուղական բյուջեյի վորակային թույլ զարգացման պատճառներ եյին հանդիսանում։

Կոլեկտիվացման բուռն զարգացումը ավելի ևս սուր կերպով դրեց գյուղական խորհուրդների բյուջեների շինարարության խնդիրը։ Ինքնուրույն գյուղական բյուջեներ պետք է մտցվեն համատարած կոլեկտիվացման ռայոնների բոլոր գյուղխորհուրդներում։ Միաժամանակ անհրաժեշտ է ավելի վճռականորեն կատարել բյուջեյի շինարարությունը Միության և այլ ռայոններում՝ այդ ռայոնների տնտեսական շինարարության տեմպից յետ չմնալու համար։ Յեկամուտի աղբյուրները մի փոքր կերպարանափոխվում են։ Խորհուրդը կոլխոզներից պետք է միջոցներ ստանա կոմունալ և ճանապարհների շինարարության և հասարակական կարգի պաշտպանության միջոցառումներն իրագործելու և կոլխոզնիկների կուլտուր-սոցիալական կարիքներին սպասարկելու համար։ Անհրաժեշտ է նույնպես կատարել միջոցների տեղափոխություն—համապատասխան շրջանից՝ ռայոն, ռայոնից՝ գյուղ, ինչպես նաև լուծել այս խնդիրը՝ համապատասխան կոլխոզային կենտրոններ վորոշ չափով



պետք է մասնակցեն գյուղական և ռայոնական բյուջեներին։

Գյուղական խորհուրդները պետք է ընդլայնեն վոչ-հարկային յեկամուտների աղբյուրները, մասնավորապես, օրինակ, այն ձեռնարկների հաշվին, վորոնք ապակուլակացման հետեվանքով՝ գյուղխորհուրդներն վերցնում են (ջրաղացներ, հողամասեր և այլն) և հանձնում կոլխոզներին՝ նրանց արտադրական բազան ընդարձակելու համար։ Բյուջետական ոպերացիաների ընդլայնումը առաջին նվագ գյուղխորհուրդների համար դժվար կլինի, և այստեղ՝ նրանց օգնության պետք է գան ռայոնական գործադիր կոմիտեները, ֆինանսական և բանվորա-գյուղացիական տեսչության օրգանները, վոչ միայն մանրակրկիտ քննելով գյուղխորհրդի բյուջետա-ֆինանսական գործնեյությունը, այլ և գործնական օգնություն ցույց տալով նրան բյուջե և տնտեսական պլաններ կազմելու, նույնպես և գյուղխորհուրդների համար հաշվապահական ապարատ պատրաստելու, թեկուզ տեխնիկական աշխատողների հիմնական կորիզը ուղարկելով հաշվապահական և բյուջետային տնտեսության կազմակերպման կարճատև դասընթացքներ։

Գյուղխորհուրդների բյուջետային բազան ընդլայնելը խորհուրդներին հնարավորություն կտա լիովին իրագործել իրենց ֆունկցիաները և կբարձրացնի նրանց՝ վորպես նոր, կոլեկտիվացված գյուղի իսկական տերերի և կարգադրողների՝ տեսակարար կշիռը։

### Ինչպե՞ս ղեկավարել կոլխոզներին

Իսկ գործնականում գյուղխորհուրդները ինչպես պետք է ղեկավարեն կոլխոզներին, նրանց միջև փոխհարաբերության ինչպիսի կազմակերպչական ձևեր են սահմանված, վոր դրանք նպաստեն պրոլետարական դիկտատուրայի օրգանների՝ խորհուրդների ղեկավար դերի ամրացմանը և կոլխոզների՝ վորպես գյուղական տնտեսության հասարակական սեկտորի արտադրական բջիջների՝ աճմանը։

Գյուղական խորհուրդները պարբերաբար լսում են կոլխոզների վարչությունների զեկուցումները, ինչպես ընդհա-

նուր, նույնպես և կոլխոզային շինարարության առանձին ճյուղերի մասին։ Գյուղխորհուրդները քննում և հաստատում են կոլխոզների արտադրական և տնտեսական պլանները, նրանց մեջ համապատասխան ուղղումներ են մտցնում և հետևում են այդ պլանների ճիշտ և ժամանակին կատարմանը։ Գյուղխորհուրդները հաստատում են կոլխոզների մշակած և խորհրդի սեկցիայից անցած ներքին կարգավորության, աշխատանքի և աշխատավարձի կազմակերպման և նորմավորման կանոնները, ի չիք համարելով կոլխոզների այն վորոշումները, վորոնք հակասում են պետական որենսդրությանը և պրոլետարական դիկտատուրայի վոգուն։

Գյուղխորհուրդները կարգադրում են բոլոր հողային ֆոնդերը և հսկում են, վոր դրանք կոլխոզում ռացիոնալ կերպով ոգտագործվեն, մասնավորապես՝ գյուղխորհրդի գյուղատնտեսական սեկցիայի միջոցով։

Վորպես պետական իշխանության որգան՝ գյուղական խորհուրդը քննում է կոլխոզի հայտարարությունները իրեն անհրաժեշտ վարկերի մասին, մեքենամատակարարման և պետական այլ ձևի ոգնության մասին, աշխատում է դրանց բավարարել, ընդհանուր հսկողություն սահմանելով դրանց կանոնավոր և նպատակահարմար գործադրման վերաբերմամբ՝ կոլխոզների կողմից։

Գյուղխորհուրդները քննում են բոլոր այն խնդիրները, վորոնք վերաբերում են կոլխոզների՝ պետության հանդեպ իրենց պարտականությունները կատարելուն (հարկեր, հացամթերումներ և պետական կամպանիաներ), նպաստելով դրանց լուծմանը պրոլետարիատի դասակարգային շահերին համապատասխան։

Գյուղական խորհուրդները ընդհանուր կարգով քննում են կոլխոզի անդամ ընդունելու հարցերը, այնուհետև նման հարցերը կիրառվում են անմիջականորեն կոլխոզի վարչության և ընդհանուր ժողովի կողմից։ Մերժվում են թեկնածություններն այն անձերի, վորոնք դասակարգայնորեն ոտար և թշնամի յեն խորհրդային իշխանությանը։



Գյուղական խորհուրդները քննում և կյանք են անցկացնում կուլակության՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիայի խնդիրները, այդ խնդիրները կապելով համատարած կոլեկտիվացման հետ,—մասնավորապես՝ ապակուլակացմանը, գյուղից վտարելու և այլ քաղաքական, վարչական և հասարակական բնույթի հարցերը, հիմնվելով բատրակ-չքավորական մասսաների ակտիվացման վրա և հասարակական համապատասխան կարծիք կազմակերպելով։

Գյուղական խորհուրդները քննում և վճռում են կուլակներից խլված գույքը կոլխոզներին հանձնելու և կոլխոզներում դրանք կանոնավոր ոգտագործելու խնդիրները։

Խորհրդի աշխատանքը և նրա փոխհարաբերությունները կոլխոզների հետ, պետք է այնպես լինեն, վոր վոչ մի դեպքում չճնշվի կոլխոզների տնտեսական ինքնագործնեյությունը, խորհուրդները վոչ մի դեպքում չպետք է յուրացնեն կոլխոզների վարչությունների իրավունքները, բայց և պետական իշխանության որգանի ղեկավարությունը՝ չպետք է թողնեն գյուղացիական տնտեսությունների արտադրական միավորությունների վարչությունների ձեռքը։

**Խորհուրդներին ղեկավարելու գործը և՛լ ավելի ուժեղացնել**

Բոլորովին պարզ է, վոր խորհուրդների աշխատանքի ձևերի և մեթոդների արմատական և խոր վերակառուցումը և խորհուրդների հետագա գործնեյությունը, վորի բովանդակությունը չափազանց ընդարձակվում է, պահանջում է խորհուրդների ուժեղ ղեկավարություն՝ վերադաս կազմակերպությունների կողմից։

Շրջանային և ռայոնական գործադիր կոմիտեներն իրենց գործնեյության ծանրության կենտրոնը պետք է դարձնեն համատարած կոլեկտիվացման ռայոններում գտնված խորհուրդների կենդանի կապի և հրահանգման ուժեղացումը։ Անհրաժեշտ է ստեղծել ռայոնական գործկոմներին կից՝ խորհրդային շինարարության հրահանգիչների կազմ՝ գյուղերը սիստեմատիկ այցելելու համար։ Այդ հրահանգիչները պետք է և կոլխոզային շինարարության վորակյալ աշխատողներ լինեն, վորպեսզի լուծեն բոլոր այն խնդիրները, վորոնք կապված են կոլխոզային շինարարության և այդ շինարարության ղեկավարման (խորհուրդների կողմից) հետ։

*Ապահովել կուսակցության յեվ բանվոր դասակարգի ղեկավարությունը*

Գյուղի սոցիալիստական վերակառուցման
պարտադիր և անհրաժեշտ պայմանն ե հան-
դիսանում այդ պրոցեսի ղեկավարությունը՝
կուսակցության և բանվոր դասակարգի կող-
մից։ Քաղաքային խորհուրդները, վորոնք պրո-
լետարական ինքնագործունեյության կենտրոն-
ներ են հանդիսանում, պրոֆեսիոնալ միությունների և
շեֆական կազմակերպությունների հետ միասին պետք ե ընդ-
հուպ մոտենան գյուղական խորհուրդներին ոգնելու հարցին,
խորհուրդները պատմական բեկումն են ապրում, արմատապես
վերակառուցում են իրենց շարքերը, փոփոխում են իրենց աշ-
խատանքի ձևերն ու մեթոդները՝ համայնացրած տնտեսության
խնդիրներին համաձայն և կուլակությանը՝ վորպես դասա-
կարգի՝ լիկվիդացիայի յենթարկելու համար։

Խորհրդային Միության մեջ 1.159 քաղաքային խորհուրդ
կա։ Քաղխորհուրդների անդամների բանակն իր շարքերում
ունի մինչև 120.000 ներկայացուցիչներ։ Ինդուստրիալ պրոֆ-
միությունները պրոլետարների միլիոններ ունեն իրենց կազ-
մում։ Նրանք բացի այդ՝ ունեն տնտեսական և կուլտու-
րական զորեղ հնարավորություններ և նրանք պարտական են
ոգնել գյուղական խորհրդին, պարտական են իրենց ուժերից և
միջոցներից բաժին հանել նրան, դրանով գործնականապես
իրագործելով քաղաքի և գյուղի զոդումը և կատարելով իրենց
պրոլետարական կենտրոնների — ինդուստրիայի շինարարու-
թյան շտաբների դերը, վորոնք իրենց յետևից են տանում
գյուղը և առաջ են մղում գյուղական տնտեսության վերա-
կառուցումը։

Բոլոր կուսակցական և հասարակական կազմակերպու-
թյունների ուշադրությունը և ուժը այժմ մոբիլիզացիայի յե
յենթարկվում խորհուրդների աշխատանքի բարձրացման և նրանց՝
համայնական գյուղատնտեսական արտադրության ղեկավար-
ման իսկական կենտրոններ դարձնելու խնդիրների շուրջը, և
քաղխորհուրդները պետք ե անպայման այդ շարժման առա-
ջին շարքում լինեն։

*Զարգացնել մրցումը գյուղին ոգնելու համար*

Քաղաքային խորհուրդներին, պրոֆեսիո-
նալ միություններին և շեֆական կազմա-
կերպություններին անհրաժեշտ ե լայն
մրցում հայտարարել և գյուղխորհուրդների



ղեկավար աշխատանքների համար հարյուր և հազարավոր լավ
փորձված, քաղաքականապես զարգացած պրոլետարներ տալ։
Միաժամանակ, փոխանակության կարգով, քաղաքային խոր-
հուրդները պետք ե կազմակերպեն գյուղխորհուրդներում յեր-
կարատև աշխատանքների համար՝ քաղխորհուրդների և սեկ-
ցիաների անդամներին ուղարկելու գործը, մինչև իսկ քաղ-
խորհուրդների ղեկավարող վերնախավից, և իրենց շարքերը
քաշեն գյուղական աշխատավորների, ակտիվիստների վորոշ
քանակությունն՝ կոփելու և սովորեցնելու համար։

Առանձին ռայխորհուրդները, քաղխորհուրդների սեկցիա-
ները պետք ե իրենց վրա վերցնեն գյուղխորհուրդների և
նրանց սեկցիաների շեֆությունը և գործնականորեն ղեկավա-
րեն և ոգնեն նրանց՝ համապատասխան ճյուղերում տարվող
աշխատանքներին։ Քաղխորհրդի անդամներից կարելի յե կազ-
մակերպել գյուղական խորհուրդներին «աջակցող խմբակներ»,
ամրացնելով նրանց գյուղխորհուրդներին՝ մշտական ոգնու-
թյան, պետական կամպանիաներ անցկացնելու համար և այլն։

Քաղաքային խորհուրդները պետք ե ոգտագործեն իրենց
տրամադրության տակ յեղած ուժերն ու միջոցները՝ գյուղա-
կան աշխատավորների կադրեր պատրաստելու համար, կազ-
մակերպելով համապատասխան դասընթացքներ, այդ աշխա-
տանքներին ոգնության քաշելով պրոֆմիություններին և այլ
հասարակական կազմակերպություններ։ Հազարավոր թելերով
կապվելով գյուղխորհուրդների հետ՝ քաղաքային խորհուրդները
և պրոֆմիությունները կկարողանան պրոլետարական բովան-
դակություն տալ գյուղի աշխատանքին և պրոլետարական
իդեոլոգիա պատվաստել գյուղական աշխատավորներին։

Ինչ արկե, այս բոլոր աշխատանքը պետք ե այնպես անցկա-
ցնել, վոր վոչ մի դեպքում չուրացվեն գյուղխորհուրդների իրա-
վունքները, չճնշվի նրանց ձեռներեցությունը։ Ամբողջ աշխա-
տանքը գյուղում քաղաքային խորհուրդները, պրոֆմիություն-
ները և շեֆական կազմակերպությունները անց են կացնում
գյուղական խորհուրդների միջոցով, հենվելով չքավոր-բատրա-
կային կորիզի վրա թե խորհրդի ներսում և թե նրանից դուրս։

Առանձին նշանակություն ե ստանում քաղաքային խոր-
հուրդների, պրոֆմիությունների և շեֆկազմակերպություն-
ների մասնակցությունը գյուղում մասսայական աշխատանքի
զարգացման, չքավորության և բատրակների խմբակներ կազ-

մակերպելու, նրանց մոբիլիզացիայի յենթարկելու գործում կուլակության դեմ վճռական և անխնա պայքարելու և կուլակին՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիայի յենթարկելու համար։

Պրոլետարական ագդեցությունը այստեղ վճռողական նշանակություն կունենա, բատրակ—չքավորական շարքերի ռազմունակությունը բարձրացնելով, նրանց՝ իրենց ուժով և վճռականությամբ վարակելով։ Դրա հետ միասին նա կոգնի գյուղացիության հիմնական մասի (միջակի) վերաբերմամբ ուղիղ գիծ անցկացնելուն, չքավորության՝ միջակ գյուղացիության հետ ունեցած դաշինքի՝ վորպես սոցիալիստական գյուղի շինարարության հաջողության հիմնական գրավականի՝ ամրացմանը։

Գյուղական խորհուրդները և կոլխոզային շարժումը անմիջականորեն ղեկավարելու գծով՝ քաղխորհուրդները գյուղխորհուրդների և կոլխոզների վարչությունների հետ միասին կազմում են կոլխոզների արտադրական պլանները, կազմակերպում են արտադրական գործնեյությունը, սահմանում են աշխատանքի և կենցաղի կարգավորման ընդհանուր սկզբունքներ, մշակում են կոլխոզների տնտեսական, կոմունալ և կուլտուրական սպասարկման միջոցառումները և այլն, ինարկե, չյուրացնելով գյուղխորհուրդների իրավունքները, չմիջամտելով նրանց գործնական աշխատանքներին և իրենց ամբողջ գործնեյությունն ուղղելով կոլխոզային շարժման սոցիալիստական բովանդակությունը խորացնելու վրա, կոլխոզների ներսում մանր բուրժուական իդեոլոգիայի դեմ պայքարի վրա, կուլակային ակտիվության արմատական վերացման և բոլոր միջոցառումների անցկացման վրա՝ գյուղում կապիտալիստական արտադրության արմատների լիկվիդացիայի համար։

Քաղխորհուրդների, պրոֆմիությունների և չեֆկազմակերպությունների՝ գյուղական խորհուրդներին ոգնելու խնդիրը այդ միջոցառումներով դեռ բոլորովին չի վերջանում։ Անհրաժեշտ է, վորպեսզի այդ կազմակերպություններից յուրաքանչյուրը քննության առնի և անհապաղ վորոշի այն կոնկրետ միջոցառումները, վորոնք համապատասխանում են քաղաքի և գյուղի զոդման նոր խնդիրներին։ Անհրաժեշտ է գյուղխորհրդին ամենալայն ոգնություն ցույց տալ, լայն մրցում ծավալել և այդ հարցերի լուսաբանման մեջ քաշել մամուլը։

Պատմական բեկումը

Յերկիրը ապրում է մի բեկում, վորն իր եյությամբ՝ վճռողական է։ Կուսակցությունը և խորհրդային իշ-



խանությունը խոշորագույն յեռանդով և յերկաթե կամքով իրականացնում են Խորհրդային Միության սոցիալիստական շինարարությունը՝ աշխատավորների ավելի ու ավելի խոր շերտերը արթնացնելով և վոտքի կանգնեցնելով նրանց։ Գյուղն արթնացել է դարավոր քնից։ Ինչպես գարնան վարարման ժամանակ՝ ջարդվում է մանր-բուրժուական սովորույթների, հասկացողությունների և հարաբերությունների սառցե կեղևը։ Սոցիալիստական ծիլերը բուռն կերպով դուրս են գալիս հողից և հեռու չէ այն ժամը, յերբ նրանք հանրայնացված հողագործության համատարած ցանցով կծածկեն վոչ հեռավոր անցյալի խավար, ստրկացած և նախապաշարումների մեջ ընկղմված գյուղը։

Գյուղացիական տնտեսության կոլեկտիվացումը զորեղ ալիքներով առաջ է վազում, իր ճամբին գլորելով բոլոր արգելքները, բոլոր նրանց, ովքեր կփորձեն կանգնեցնել նրա վազքը։ Բայց աշխատավորների միլիոնավոր մասսաների արթնացած քաղաքական և տնտեսական ակտիվությունը, կոլխոզային շարժման հենց թափը պարտավորցնում են կուսակցությունը և բանվոր դասակարգին և նրանց վրա խոշորագույն պատասխանատվություն դնում ստեղծագործական յեռանդի կանոնավոր ուղղության և ոգտագործման համար, դեպի նոր կյանքը և նոր կենցաղը սկսված ահագին շարժման կանոնավոր և ժամանակին ղեկավարման համար, և առաջին հերթին այդ պատասխանատվությունը և պարտավորությունը խորհուրդների վրա յե դրվում, վորպես կուսակցության գծի անցկացնողների և բանվոր դասակարգի դիկտատուրայի որգանների վրա։

Կուսկազմակերպության ամբողջ ուշադրությունը պիտի դարձվի խորհուրդների վերակառուցման վրա

Կուսակցական կազմակերպությունները տեղերում, կուսակցական և խորհրդային մամուլը, պետք է յերեսները դարձնեն դեպի խորհուրդները, ավելի ուշադրություն նվիրեն, ուժեղացնեն խորհուրդների նկատմամբ իրենց ղեկավարությունը, ուժեղացնեն խորհրդի ֆրակցիաների գործնեյությունը, նպաստելով՝ վոր բոլոր հարցերը սկզբունքորեն ուղիղ լուծվեն, խորհուրդների աշխատանքներն ուղղվեն դեպի քաղաքական և տնտեսական խնդիրների լուծումն և նրանց ամբողջ գործնեյության մեջ ամուր դասակարգային գիծ անցկացվի։

Լ. 2314

Առանձնակի նշանակություն ունեցող խնդիրներ են դրվում կուսակցական կազմակերպությունների և խորհուրդների վրա—չքավորների և բատրակների ղեկավարման, նրանց քաղաքական ակտիվության, խորհուրդներում, կոլխոզներում, կոոպերացիայում, գյուղկոմիտեներում չքավորական խմբակների կազմակերպման և այլն խնդիրներ։

Խորհուրդների հետ միասին՝ կուսակցական կազմակերպությունները պետք է իրենց գործնեյությունը ուղղեն դեպի մասսայական աշխատանքների զարգացումը, աշխատավոր կանանց մասսաների ակտիվության բարձրացումը, մանավանդ դեպի կոլխոզնիկների քաղաքական մակարդակի բարձրացումը և կուսակցական ու լուսավորական աշխատանքների ընդհանուր դրությունը կոլխոզներում։

Կուսակցական կազմակերպությունները նույնպես պետք է իրենց ուշադրության կենտրոն դարձնեն իդեոլոգիական և գործնական պայքարը՝ կուսակցական գլխավոր գծից ամեն տեսակ շեղումների դեմ։ Համապատասխան կրթական-քաղաքական աշխատանքի միջոցով՝ նրանք պետք է պայքարեն մանր-բուրժուական իդեոլոգիայի արտահայտությունների դեմ, որ անխուսափելի յե ներկայումս՝ գյուղացիական մասսաները միավորող կոլխոզներում՝ սրանց ամենօրյա աշխատանքների և կյանքի մեջ։ Անհրաժեշտ է աստիճանաբար և սիստեմատիկ նրանց պատվաստել նոր սոցիալական հասկացողություններ, նոր կենցաղ։

Միայն այն պայմանով, յերբ կուսակցությունը—սոցիալիզմի շինարարության հիմնական վողնաշարը, շարժիչ ուժը և ուղեղը—ամուր կերպով իր ձեռքը կառնի խորհուրդների աշխատանքի վերակառուցումը, յերբ տեղերի կուսակցական կազմակերպությունները այդ խնդրի շուրջը մոբիլիզացիայի կենթարկեն ամբողջ խորհրդային հասարակայնության ուշադրությունը, այն ժամանակ միայն՝ «Խորհուրդներ, վերակառուցեք ձեր աշխատանքը և ձեր ամբողջ ուշադրության առարկա դարձրեք համատարած կոլեկտիվիզման խնդիրը» լոզունգը կիրականանա արագ և հաջող կերպով։

Խորհուրդների—պրոլետարական դիկտատուրայի օրգանների ամրացումը՝ կդառնա նոր և խոշորագույն գործոն, որ կապահովի սոցիալիզմի հաղթական ընթացքը և սոցիալիստական հասարակության կառուցումը։



ՀՀ Ազգային գրադարան
NL0205375

6797

10 կոպ.

ЗЕКЦЕР И АЛИКАРИ

Сплошная коллективизация
и новые задачи советов

На армянском языке

ЦЕНТРИЗДАТ НАРОДОВ СССР—Москва, центр, Никольская, 10